Արձանագրություն թիվ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28 օգոստոսի 2014թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Ներկա էին խորհրդի բոլոր 8 անդամները:

Օրակարգ

1. Խորհրդի 2014-2015 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2014-15թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
3. 2014-2015թթ.ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյան:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա սկզբից ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նորացված կազմը,որն ընդգրկում է ֆակուլտետի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական

առաջատար կազմը և ուսանողական կառույցները: Այնուհետև մանրամասն ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի 2014-15թթ. ուստարվա աշխատանքային պլանը և նշեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի ռազմավարական պլանից: Այն ընդգրկում է բակալավր I,II,III և մագիստրատուրայի II կուրսի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:Ֆակուլտետի խորհուրդը գումարվում է ամենամսյա պարբերականությամբ, հարկ եղած դեպքում նաև արտահերթ:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հաստատելու խորհրդի 2014-15թթ. ուստարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա ֆակուլտետի խորհրդի նոր կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյան: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III կուրսերի և մագիստրատուրայի երկրորդ կուրսի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- <<Գծանկարի,գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց ներկայացնել տնօրինությանը հաստատելու 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ -2014-15թթ.ուստարվա I կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության քննարկման ու հաստատմանը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով:

ՈՐՈՇԵՑԻՆ-Գործընթացի իրականանացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և քարտուղարի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ռ.Մելքումյան